ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 17. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԿՈՒՄԸ ԱԹԵՆՔՈՒՄ

1

Պարսկական բանակը ափ իջավ Աթենքից հյուսիս՝ Մարաթոնում, նպատակ ունենալով ցամաքից հարձակվել Աթենքի վրա: Զորավար Միլթիադեսը, արագ ընթացքով, աթենական 10000-անոց բանակը տարավ պարսիկներին ընդառաջ: Աթենական բանակը դիրքեր գբաղեցրեց բլրալանջին, իսկ պարսիկները, հույսը դնելով իրենց կրկնակի թվաքանակի վրա, Մարաթոնի դաշտում:

Լավագույն ուժերը դասավորելով զորքի թևերում, Միլթիադեսը աթենացիներին գրոհի տարավ: Պարսիկները նման սրընթաց գրոհ չէին սպասում: Աթենացիները սկսեցին թևերից շրջապատել պարսիկներին, որոնք խուճապի մատնվելով, փախան դեպի իրենց

ԱԹԵՆՔԻ ԱԿՐՈՊՈԼԻՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ



1. Պարթենոն տաճարը
2. Էրեխթեոն տաճարը
3. Սրբազան ձիթենին
4. «Մարտնչող» Աթենասի արձանը
5. Հաղթանակի դիցուհի Նիկեի տաճարը
6. Ակրոպոլիսի մուտքի սյունաշարը
7. Դիոնիսոսի թատրոնը
8. Հերովդես Ատտիկի թատրոնը
9. Ասկլեպիոսի տաճար-բուժարանը

նավերը, և ափից հեռացան: Աթենացիներին հաջողվեց նույնիսկ մի քանի նավ գրավել:

Միլթիադեսը մի արագավազ զինվորի ուղարկեց Աթենք՝ հաղթանակի լուրը հայտնելու: Զինվորը, վազելով Մարաթոնից Աթենք, հայտնեց հաղթանակի լուրը և անշնչացած ընկավ: Դրան ի հիշատակ, ներկայիս օլիմպիական խաղերում ներառվել է սպորտային հատուկ մարզաձև՝ ***Մարաթոնյան վազքը***, որի հեռավորությունը հավասար է Աթենքից մինչև Մարաթոն տարածությանը՝ 42 կմ 196 մ:

2

Սպարտայի թագավոր ***Լեոնիդասը 300 սպարտացիներով*** ամրացավ ***Թերմոպիլի կիրճում՝*** փակելով պարսիկների ճանապարհը դեպի Միջին Հունաստան: Աթենական նավատորմը ***Թեմիստոկլեսի*** ղեկավարությամբ պաշտպանում էր սպարտացիներին ծովի կողմից: Մեկ շաբաթից ավելի պարսից բանակը չէր կարողանում գրավել նեղ կիրճը: Քսերքսեսն արդեն մտադիր էր նահանջել, բայց գտնվեց մի դավաճան, որը մեծ պարգևով պարսիկներին լեռնային արահետով անցկացրեց հույների թիկունքը: Լեոնիդասն իր 300 սպարտացիներով զոհվեց անհավասար մարտում:



3

Սալամինի մոտ աթենացիները դաշնակից պոլիսների հետ միասին ունեին 300 նավ, իսկ պարսիկները՝ 500: Սակայն ծանրաշարժ պարսկական նավերը հարմար էին բաց ծովում լողալու համար և Սալամինի ծանծաղ ու ոչ լայն նեղուցում դժվարությամբ և դանդաղ էին շարժվում:



Եռաշար թիերով հունական թեթև նավերը ծանոթ ջրերում գերազանցում էին պարսիկներին: Նավաքթի մետաղյա սուր ժանիքով հարվածում էին թշնամու նավին և խորտակում այն: Ծովամարտում պարսկական նավերի մեծ մասը խորտակվեց:

4

Զարգացավ տնտեսությունը: Աթենական ապրանքները վաճառքի էին տարվում Եգիպտոս, Փոքր Ասիա, Կիպրոս, Ղրիմ և այլ երկրներ: Աթենքի նավահանգիստ ***Պիրեյում*** կարելի էր հանդիպել տարբեր երկրներից եկած նավերի ու վաճառականների: Աթենքում էր Հունաստանի ամենամեծ ստրկավաճառական շուկաներից մեկը: Ստրուկներին օգտագործում էին տնային ծառայության, գյուղատնտեսության ու արհեստի տարբեր ճյուղերում, հանքերում: ***Աթենքը ստրկատիրական դեմոկրատական պետություն էր:***

Աթենքի բնակչությունը գնալով աճում էր: Աթենք բնակության էին տեղափոխվում նաև մարդիկ ուրիշ պոլիսներից: Սակայն լիիրավ քաղաքացի նրանք չէին համարվում, ժողովրդական ժողովին չէին մասնակցում, չէին կարող ընտրվել պետական պաշտոնում: Աթենացի էին համարվում միայն նրանք, ում և՛ հայրը, և՛ մայրը աթենացիներ էին: Աթենքի քաղաքացիները հաճախում էին դպրոց պետության հաշվին:

5

Պերիկլեսը երազում էր միավորել Հունաստանի բոլոր պոլիսները միասնական պետության մեջ: Նա Աթենք բնակության էր հրավիրում ժամանակի անվանի փիլիսոփաների, քանդակագործների, թատերագիրների: Աթենքը զարդարվեց գեղեցիկ հասարակական շենքերով: Ակրոպոլիսում կառուցվեցին Աթենքի հովանավոր Աթենաս աստվածուհու հոյակապ տաճարը՝ ***Պարթենոնը,*** և այլ գեղեցիկ շինություններ: Ակրոպոլիսի ստորոտում կառուցվեցին զբոսավայրեր, պուրակներ, հիվանդանոցներ և թատրոններ: Պետությունը չքավորներին փող էր բաժանում, որ նրանք էլ կարողանան թատրոն հաճախել:

6

«Դեմոս» ասելով հին հույները հասկանում էին գիտակից, կազմակերպված մարդկանց ամբողջությունը, որն իր լավ մտածված քայլերով գործում է ի շահ պետության և հասարակության, և առանց հապշտապության:

«Օխլոսը», հույների համոզմամբ, մարդկանց ամբոխն է, որին քիչ են հետաքրքրում պետության և հասարակության շահերը և որի համար կարևոր էր հենց հիմա, այս րոպեին իր պահանջների կատարումը, անկախ նրանից, թե դա ինչ հետևանքներ կարող է ունենալ երկրի և այլ մարդկանց համար:

Օրինակ, եթե ինչ-որ մեկին կասկածում են օրինազանցության մեջ, ապա դեմոսը պահանջում է նրան ձերբակալել, դատել ըստ օրենքի և, եթե մեղավոր է, համապատասխան պատժի ենթարկել:

Նույն իրավիճակում օխլոսը պահանջում է այդ մարդուն հենց հիմա, հրապարակավ կախել, առանց հաշվի առնելու, որ այդ մարդը կարող է և անմեղ լինել:

Այսօր էլ հանդիպում են գործիչներ, ովքեր հրահրում են ամբոխին իրենց անձնական նպատակներին հասնելու համար: